ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 24 հոկտեմբերի 2006թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի Ի-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Հ. Դանիելյանի

Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի

Ռ. Պապայանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Հրաչ Վարդանյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղ. Հրաչ Վարդանյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 3 կետի եւ 407 հոդվածի 3 մասի սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը:

Հ. Վարդանյանը միջնորդել է իրեն ազատել պետտուրքի վճարումից, որը բավարարման ենթակա է, քանի որ գործազուրկ եւ եկամտի այլ աղբյուր չունի:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին օրենքի 69 հոդվածի 6 կետով, Սահմանադրական դատարանի Ի-ին կազմը

ՈՐՈՇԵՑ

Հրաչ Վարդանյանի դիմումը՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 3 կետի եւ 407 հոդվածի 3 մասի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

Հ. Վարդանյանին ազատել պետտուրքի վճարումից:

Նախագահող՝

Անդամներ՝